

الجمعية الخيرية العمومية الأرمنية

المشهرة برقم ٤١٨ تاريخ ٢٤ نيسان ١٩٦٠

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION / ALEPPO - SYRIA

Հ.Բ.Ը.Միութեան Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողով ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻՒ 1

Հալէպ, Սուրիա 14 Յունուար 2013

Հարիրամեայ պատմութեան ընթացքին, երբ հայութիւնը տագնապալից իրավիճակներու դէմ յանդիման գտնուած է, Հ.Բ.Ը.Միութիւնը միշտ իր նիւթական եւ բարոյական օժանդակութիւններով սատար հանդիսացած է հայութեան ցաւերը, պատուհասները մեղմացնելու եւ անոր ձգած հետքերը դարմանելու:

Սուրիոյ տագնապալի վիճակը երբ վտանգեց սուրիահայութիւնն ու իր կառոյցները, Հ.Բ.Ը.Միութեան Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովը իր նիստերուն ընթացքին քայլ - առ քայլ հետեւեցաւ կացութեան զարգացումներուն: Արտակարգ ժողով մը գումարեց օրին, որոշում գոյացուց, իր բոլոր հնարատրութիւններով օժանդակել սուրիահայ ընտանիքներուն:

Ժողովի որոշումը գործադրութեան դնելու ճամբուն վրայ, Հ.Բ.Ը.Միութեան Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Միջին Արեւելքի ներկայացուցիչի միջեւ եղած խորհրդակցութենէն եւ թելադրութենէն մղուած, Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովը պատմական որոշում կայացուց ձեռնարկել նուիրահաւաքի, օժանդակելու սուրիահայ ընտանիքներուն:

6 Օգոստոս 2012-ին, Հ.Բ.Ը.Միութեան Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովի որոշումով կազմուեցան Հ.Բ.Ը.Միութեան Արտակարգ Վիճակի Մարմիններ Հալէպի, Դամասկոսի, Գամիշլիի եւ Լաթաքիոյ մէջ:

Ա) Հալէպի Արտակարգ Վիճակի Մարմինի գործունէութիւնը ընդգրկեց.-

1.- Սննդեղէնի բաշխում, որը կատարուեցաւ երեք հանգրուաններով՝

Առաջինը՝ 13 Օգոստոսէն մինչեւ 30 Սեպտեմբեր

Երկրորդը՝ 20 Հոկտեմբերէն մինչեւ 30 Նոյեմբեր

1/4

Սննդեղենի տուփերը կը պարունակեին՝ 4 հոգիէ բաղկացած ընտանիքի մը բաւարար - բրինձ, ոսպ (մանր եւ մեծ), ձաւար (մանր եւ մեծ), կաթ, շաքար, անուշ, հրուշակ, ձիթապտուղի ձէթ, արեւածաղիկի ձէթ, մարդատելլա, մաքարօն, պանիր, թէյ, ծոթրին, իոլ, լոլիկի մածուկ, լուացքի հեղուկ, օճառ) :

Նկատի առնելով վառելանիւթի չգոյութիւնը եւ տուներէն ներս ցուրտ ձմեռը դիմագրաւելու համար, որոշում առնուեցաւ, որ 3-րդ Բաշխումը ընդգրկէ բրդեղէն (պլանկէթ, ձեռնոց, գլխարկ, վզնոց եւ գուլպայ), ասոնց կողքին կար նաեւ կաթ , փոքրիկներու համար անուշեղէն եւ Միութեան օրացոյցը:

Երրորդը՝ տուփերը բաժնուեցան Գեկտեմբեր (2012) եւ Յունուար (2013) ամիսներուն:

Իւրաքանչիւր Բաշխումէն օգտուեցան 2705 ընտանիք:

Հ.Բ.Ը.Մ-ի Հ.Ե.Ը.-ի Երիտասարդները պարտականութիւն ստանձնեցին վարժարանիս ինքնաշարժերու միջոցաւ անկարներուն, ծերերուն եւ հիւանդներուն պաշարի տուփերը հասցնել մինչեւ իրենց բնակարանները:

Վերոյիշեալ աշխատանքները տարուեցան նաեւ Դամասկոսի եւ Գամիշլիի մէջ:

Դամասկոսի մէջ նպաստ՝ սննդեղէն բաժնուեցաւ 250 ընտանիքի: Իւրաքանչիւր տուփի մէջ գետեղուեցան 5 հոգիէ բաղկացած ընտանիքի մը համար մէկ ամսուայ անհրաժեշտ ուտեստեղէն եւ դեղորայք: Պատրաստուեցան նաեւ Շտապ Օգնութեան պայուսակներ:

Պատրաստուած տուփերը տրամադրուեցաւ Դամասկոսի Շտապ Օգնութեան Գործադիր Մարմնին, որ ստանձնեց բաժնելու պարտականութիւնը կարօտեալ ընտանիքներուն:

Բաշխումը կայացաւ Հոկտեմբեր եւ Նոյեմբեր, 2012-ին:

Գամիշլիի մէջ նպաստ՝ սննդեղէն եւս բաժնուեցաւ 550 ընտանիքի: Վերոյիշեալ նպաստէն անմասն չմնացին նաեւ մօտակայ շրջաններու՝ Հասաբէի, Մալիքիէի, Ռաս Ալ Այնի հայութիւնը:

Բաշխումը կայացաւ Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր եւ Գեկտեմբեր ամիսներուն:

2.- Յատկացուեցաւ նիւթական նպաստ, օժանդակելով ցարդ 20 վիրաւորներու բուժման ծախսերուն, որոնք զոհ դարձած էին արձակազէններուն եւ պայթումներուն: Ինչպէս նաեւ Միութիւնը յանձն առաւ հոգալու հիւանդներու հիւանդանոցի եւ դեղօրայքի ծախսերը: Եւ կարգ մը մահացած անձերու թաղման ծախսերը:

3.- Տնտեսական ծանր կացութենէն ելլելով, 6-12 տարեկան չքաւոր երախաներու ձմեռնային հագուստեղէն բաժնուեցաւ: Նիւթական նպաստ յատկացուեցաւ Ազգ. Որբանոցի Ֆոնտին, սննդեղէն տրամադրելու որբերուն:

4.- Առ ի երախտագիտութիւն տեղացի ժողովուրդին, կայացաւ տաք ճաշի հիւրասիրութիւն՝ տեղացի անտուն 300 հոգիի, որը բարձր գնահատուեցաւ ապաստանեալներու եւ պատկան մարմիններու կողմէ:

5.- Հալէպի, Գամասկոսի եւ Գամիշլիի մէջ, պատրաստուեցան յարմարաւէտ ապաստարաններ անհրաժեշտ առարկաներով հանդերձ :

- Հալէպի մէջ Միութեան շէնքը եւ վարժարանը անհրաժեշտ առարկաներով եւ սարքաւորումներով օժտուեցաւ (պլանկէթ, անկողին, ջերուցում, ջրամբար եւայլ...) ի պահանջեալ հարկի գործադրութեան դնելու: Ինչպէս նաեւ յատուկ սենեակ մը, որպէս դարմանատուն:

Բ.- Հ.Բ.Ը.Միութիւնը վերեւ յիշուած իր մարդասիրական բարեգործական աշխատանքներուն զուգահեռ , Հալէպի, Գամասկոսի, Գամիշլիի , Լաթաքիոյ եւ Քեսապի մէջ, իր գործօն մասնակցութիւնը բերաւ Սուրիահայ Շտապ Օգնութեան եւ Վերակառուցման Վերին Մարմինի, Գործադիր Մարմիններու եւ անոր ենթակայ յանձնախումբերու աշխատանքներուն, նիւթապէս, բարոյապէս եւ Ֆիզիքապէս օգնութեան հասնելով համայն հայութեան:

Սոյն մարմիններուն աշխատանքները կ'ընդգրկեն՝ առողջապահական, սննդեղէնի բաշխում, վնասուած բնակարաններու վերակառուցում եւ վիրաւորներու բուժման ծախսերու ապահովում:

Երկրիս վիճակի բարելաւումէն ետք , եղած նուիրատուութիւններով կայացած աշխատանքներուն նիւթական տեղեկագիր մը լոյս պիտի տեսնէ, անկախ Հաշուեքննիչ Ընկերութեան մը կողմէ վաւերացուած: Այս տեղեկագիրը պիտի տրամադրուի Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովին եւ նուիրատուներուն:

Հ.Բ.Ը.Միութեան Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովը կը յայտարարէ, որ Հ.Բ.Ը.Մ.-ի Հալէպի Լ.Ն.-Գ.Կ. եւ Դամասկոսի Կ.Կիւպէնկեան վարժարանները նիւթական մեծ զոհողութեամբ իրենց դռները բացին 2012-2013 ուսումնական տարեշրջանի համար, որպէսզի հայ չքաւոր աշակերտը չզրկուի կրթութենէ: Օրուայ տազնապալի վիճակին պատճառաւ սաներու թիւը կրկնապատկուեցաւ մեր վարժարաններէն ներս, ստեղծելով նիւթական մեծ բաց մը, որը պիտի հոգայ Միութիւնը:

Հ.Բ.Ը.Միութեան Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովը բարձր կը գնահատէ Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովը, Միջին Արեւելքի ներկայացուցիչը, նուիրեալ բարերարները եւ արտասահման գտնուող մեր անդամները, որոնք իրենց բարոյական եւ նիւթական ներդրումներով թիկունք կանգնեցան սուրիահայութեան՝ օրհասական եւ դժուարին պայմաններուն:

Յանձնաժողովը նոյնպէս բարձր կը գնահատէ Հ.Բ.Ը.Մ.-ի Հալէպի, Դամասկոսի, Գամիշլիի, Լաթաքիոյ եւ Քեսապի մէջ գտնուող Հ.Բ.Ը.Մ.-ի բոլոր վարչական մարմինները, Արտակարգ Վիճակի Մարմիններու անդամները, կամաւոր երիտասարդները՝ ծառայատէր եւ մարդատէր աշխատանքներուն համար:

Հ.Բ.Ը.Միութեան Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողովը նուիրատուներուն ուշադրութեան կը յանձնէ, որ նոյնիսկ կացութեան բարելաւումէն ետք, մեր ժողովուրդը կարիքը պիտի ունենայ օգնութեան, սկսելու վերակառուցողական աշխատանքները:

Կը փափաքինք, մեր յարգելի բարերարներէն եւ նուիրատուներէն շարունակել Աստուածահաճոյ եւ բարեգործական իրենց օժանդակութիւնը, որպէսզի սուրիահայութիւնը հասնի իր նախկին աշխոյժ վիճակին:

Հ.Բ.Ը.Միութեան մարդասիրական աշխատանքները, Սուրիոյ մէջ պիտի շարունակուին, որքան ատեն, որ մեր ժողովուրդը կարիքը ունենայ օգնութեան:

Մեր յաջորդական հերթական հաղորդագրութիւններով տեղեակ պիտի պահենք Ձեզ մեր գալիք աշխատանքներուն մասին:

Նոր Տարուայ եւ Ս. Ծնունդի առթիւ յաւազոյն մաղթանքներով՝

Հ.Բ.Ը.Միութեան
Սուրիոյ Շրջանակային Յանձնաժողով

